

ԿԸՀ 2021 թ. Հայաստանի և տարածաշրջանի այլ երկրների արդյունքները

Հայաստանի ԿԸՀ 2021 թ. արժեքը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ (**49** միավոր), իսկ ստանդարտ սխալի չափը հավասար է 3.76-ի (2020-ին այն հավասար էր 3.50-ի): Ինչպես և անցյալ տարի, Հայաստանի գրանցած արդյունքն ավելի բարձր է ԿԸՀ համաշխարհային միջինից, որը հավասար է **43**-ի:

2021 թ.-ի ԿԸՀ-ի Հայաստանի հաշվարկի համար օգտագործված տվյալների աղբյուրների¹ մասին տե՛ս սույն փաթեթի «**2021 թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը հաշվարկելու համար օգտագործված աղբյուրները**» կյուրը: Հարկ է նշել, որ Հայաստանի ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործվել են այն նույն աղբյուրները, ինչ նախորդ՝ 2020 թվականին: Այդ աղբյուրներն են Բերթելսմանի հիմնադրամի 2022 թ. տրանսֆորմացիոն համաթիվը (**BF (TI)**), Ֆրիդոմ Հաուսի Անցումային փուլում գտնվող պետություններ 2021թ. զեկույցի **Կոռուպցիա** ենթահամաթիվը (**FH**), Գլոբալ Ինսայթի Երկրի ռիսկայնության 2020թ. վարկանիշը (**GI**), Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Ինթերնեշնլի Երկրի ռիսկայնության 2021թ. Ուղեցույցը (**PRS**), Ժողովրդավարության բազմազանության ծրագրի 2021 թ-ի հրապարակումը (**VDEM**) և Համաշխարհային տնտեսական ֆորումի Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցման 2020թ. հրապարակումը (**WEF**):² Գծապատկեր 1-ում ներկայացված են Հայաստանի ԿԸՀ արժեքները 2012թ.-ից մինչև 2021 թ. ընկած ժամանակահատվածում:

¹ ԿԸՀ հաշվարկների համար որպես տվյալների աղբյուրներ հանդիսանում են կառավարման և բիզնես միջավայրի վերլուծության ոլորտներում մասնագիտացած հեղինակավոր և անկախ միջազգային կազմակերպությունների պարբերական բնույթ կրող հետազոտությունները: Ինչպես և 2020 թվականին, 2021 թվականին նույնպես այդ հաշվարկի համար որպես աղբյուրներ հանդիսացել են նույն 12 կազմակերպությունների նույն 13 հետազոտությունները:

² Տվյալ երկրի ԿԸՀ համաթիվը հանդիսանում է այդ երկրի համաթիվը հաշվարկելու համար օգտագործված բոլոր աղբյուրների համար հաշվարկված համաթիվերի միջին թվաբանականը: Մասնավորապես, Հայաստանի ԿԸՀ 2021թ. համաթիվը (49) հավասար է վերը նշված աղբյուրների համաթիվերի միջին թվաբանականին: Ստորև բերված **Աղյուսակ 1-ում** կարելի է գտնել նրանում ներառված բոլոր երկրների (Արևելյան Եվրոպա և Կենտրոնական Ասիա) բոլոր աղբյուրների համաթիվերը:

Գծապատկեր 1.



180 երկիր ներառող ԿԸՀ դասակարգման 2021 թ. աղյուսակում Հայաստանը **Հորդանանի, Հունաստանի և Նամիբիայի** հետ կիսում է **58-ից 61-րդ տեղերը** (2020 թ.-ին Հայաստանը նույնքան միավորով 180 երկրների շարքում կիսում էր **60-ից 62-րդ տեղերը**):

Թրանսպարենսի Ինքերնեշի տարածաշրջանային բաժանմամբ՝ Հայաստանը, ինչպես և նախկինում, ներառված է **Արևելյան Եվրոպա -Կենտրոնական Ասիա** տարածաշրջանի մեջ: Աղյուսակ 1-ում բերված է Արևելյան Եվրոպա -Կենտրոնական Ասիա տարածաշրջանի 2021թ. ԿԸՀ դասակարգման աղյուսակը:

Աղյուսակ 1.

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 2021թ. ԿԸՀ արժեքները

Երկրի դիրքը	Երկիր	2021 թ. ԿԸՀ արժեքը	Աղբյուրների թիվը	AFDB	BF (SGI)	BF (TI)	EIU	FH	GI	IMD	PERC	PRS	VDEM	WB	WEF	WJP


45	Վրաստան	55	6		45		50	47				69		60	58
58	Հայաստան	49	6		45		44	47			32	59		66	
64	Մոնտենեգրո	46	5		53		44	47				38		50	
82	Բելառուս	41	8		33	37	30	47			29	51		50	54
87	Կոսովո	39	6		37		36	35				54	35		36
87	Հյուսիսային Մակեդոնիա	39	7		45	37	47	35				30		35	41
96	Սերբիա	38	8		37	37	50	35			32	33		44	34
96	Թուրքիա	38	9	26	37	37		47	42		37	24		61	36
102	Ղազախստան	37	9		33	20	24	35	66		64	19		33	38
105	Մոլդովա	36	7		33	37	36	47			32	33			34
110	Ալբանիա	35	8		41	37	42	35			39	25		32	30
110	Բոսնիա և Հերցեգովինա	35	7		37	37	44	35				25		27	37
122	Ուկրաինա	32	9		37	20	36	35	31		43	30		26	33
128	Ադրբեջան	30	7		29	20	21	35			24	11		74	
136	Ռուսաստան	29	9		25	20	24	35	39		24	25		40	33
140	Ուզբեկստան	28	7		29	20	24	35				26	27		36
144	Ղրղզստան	27	7		29		27	22				23	35	30	26
150	Տաջիկստան	25	6		17		21	22				19	18	50	
169	Թուրքմենստան	19	5		17	20	21	22				15			

Ինչպես երևում է աղյուսակից, տարածաշրջանի 19 երկրների շարքում Հայաստանը, ինչպես նախորդ տարի, զբաղեցնում է **2-րդ** տեղը: Այս տարածաշրջանում Հայաստանը, զիջում է միայն իր հարևան **Վրաստանին**, որի ԿԸՀ 2021թ. արժեքն է **55** (համաշխարհային դասակարգման աղյուսակում կիսում է **45-ից 48-րդ** տեղերը):

Նախորդ տարվա պես՝ Հայաստանը, բացի Վրաստանից, առաջ է իր մյուս երեք հարևաններից՝ **Թուրքիայից** (38 միավոր՝ 96-ից 101-րդ տեղեր), **Ադրբեջանից** (30 միավոր՝ 128-ից 135-րդ տեղեր) և **Իրանից** (25 միավոր՝ 150-ից 153-րդ տեղեր): Գծապատկեր 2-ում ներկայացված են Հայաստանի և հարևան երկրների ԿԸՀ 2012-2021 թթ. արժեքները:

Գծապատկեր 2.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՐ ՀԱՐԵՎԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ
2012-2021ԹԹ. ԿԸՀ ԱՐԺԵՔՆԵՐԸ**



Ինչպես և 2020 թվականին, ԵԱՏՍ անդամ մյուս բոլոր երկրների ԿԸՀ արժեքները շարունակում են ցածր մնալ Հայաստանի ԿԸՀ արժեքից: Մասնավորապես՝ **Բելառուսի** 2021 թ. ԿԸՀ արժեքը **41** միավոր է (**82-ից 84-րդ** տեղեր), **Ռուսաստանինը՝ 29** (136-ից 139-րդ տեղեր), **Ղրղզստանինը՝ 27** (144-ից 146-րդ տեղեր), իսկ **Ղապախստանինը՝ 37** միավոր (**102-ից 104-րդ** տեղեր): Գծապատկեր 3-ում բերված են Հայաստանի և ԵԱՏՍ մյուս երկրների ԿԸՀ 2012-2019 թթ. արժեքները:

Գծապատկեր 3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵԱՏՄ ՄՅՈՒՄ ԵՐԿՐՆԵՐԻ
2012-2021ԹԹ. ԿԸՅ ԱՐԺԵՔՆԵՐԸ**

